



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՒԱՅ

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԲԱՆԱԿԵՒՆԻՑԻՆԵՐԻՆԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԵՒԱՅ ԸՆԴԱՐՈՒ 1 ՄԱՅԻՍ 1865

ԹԻՒ 752

ԲԱՆԱԿԵՒՆԻՑԻՆԵՐԻՆԻ

ԶՄԻՌՆԵՒԱՅ 1 ՄԱՅԻՍ

Մինչդեռ Նիւ-Լորդքի և Վոլաշիկի թերթերը մէջ, Հարաւայնոց վերայ եղած վերջին յաղթութեանց տօնախմբութիւնը կը կատարէին ու հրապարակական ուրախութիւններ կը նշէին, 1 ինչօրն նախագահը զաւաճանութեամբ սպանուեցաւ և արտաքին գործոց պաշտօնէն միտար Սիվարտ ծանրապէս վերադարձուցաւ Վոլաշիկի թերթերին մէջ: Յայտնի ապացոյցներ կան, որ Հարաւային Ամերիկայի բնակչաց մէջ ընդարձակ երկամակցութիւն մը հաստատուեալ է: որուն նպատակն է զաւաճանութեամբ սպաննել Հիւսիսային Միացեալ Նահանգաց քաղաքական և զինուորական գլխաւոր պաշտօնատարները: Այս տեսակ ստիպելի վրէժխնդրութիւնը, որ Հարաւայնոց յուսահատութիւնը և Հիւսիսի վերայ ունեցած մեծ առեւտրութիւնին կը յուսնէ, կրնայ արդեօք սպառնալից կերպարանք փոխել և Հարաւայնոց պահանջմանցը յաջողութիւն տալ: Ամեն ինչ կարծուիք: մանաւանդ որ դահեղեցի փոխանորդ միտար Անտրէ Դոնսըն՝ հանգուցեալ միտար 1 ինչօրն տեղը անցնելով յայտարարութիւն մի հանց, որով կը ծանուցանէ թէ իւր նախորդին քաղաքական նութեանը պիտի հետեւի ըստ ամենայն մասին: Բայ յայտնան յայտնի է շատերուն թէ նոր դահեղեցը չափազանց վրէժխնդիր և խիստ բնաւորութեան տէր անձ մըն է: վասնզի Հիւսիսայնոց կրնա՞ր զօրապետին յաղթութեան ետեւ առեւտրութիւն մի ընելով ըսաւ որ, եթէ Հարաւայնոց դահեղեցը բըռնուելու ըլլայ, պիտի խնդրէ որ Աստուածաշունչին մէջ յիշուած Ամանէն 40 անգամ աւելի բարձր կախուի: Հէրման և Հէրիտան զօրավարները Հարաւայնոց երկրին վերայ յարձակելով՝ ոչ միայն առանց հարկի կատարարար սուրէ անցուցին շատ ժողովուրդ, այլև հրոյ ճարակ ըրին և աւերեցին ամբողջ գետեր, ապարակներ և այլն, և այլն: Այս գրածներն էս կը տեսնուի, թէ Ամերիկայի մէջ թէ՛

պէտեւ քաղաքակրթութիւնը յառաջագոյն կը ծաղկի, բայց սպառնալից վայրենի բարբարոսութիւնը փոխանակ նուազելու, սոսակացած ու աւելցած է: Այս անգամ գործքերը անշուշտ անանց փոխարէն հասուցման պիտի չմնան ի կողմանէ Հարաւայնոց և անոնց կուսակցոցը: Բանի մը ամիս առաջ Նիւ-Լորդք քաղաքը հրկիզելու ահաբեկութիւնը յայտնի է ամենուն, որ բարեբաղդաբար չյաջողեցաւ: Վերջապէս թէ և այսօրուան օրս Հարաւայինք ամենին կարողութիւն չունին ճակատ առ ճակատ պատերազմելու Հիւսիսայնոց դէմ, քանզի իրենց գլխաւոր զօրապետը 1 ի անձնատուր եղաւ իւր զօրաբանակին մնացորդներովը, նմանապէս Դոնսընը զօրապետը ևս մինչև յայսօր անձնատուր եղած պիտի ըլլայ, այսու համայնի առանց կիրքերը քիչ կամ շատ հանգարտելու մեծ դժուարութիւններ կը տեսնուին հաշտութիւնը մօտ ժամանակի մէջ կատարելապէս ի գործ դրուելու:

1 ինչօրն նախագահը սպաննող և Սիվարտ պաշտօնատարը վերաւորող եղեռնաւորները բռնուեցան: Սիվարտ Վոլաշիկի մէջ միտար արտաքին գործոց առժամանակեայ տեսուչ անուանեցաւ մինչև միտար Սիվարտ պաշտօնատարին առողջանալը: Նոր նախագահը սուրբական հանգիսի իւր պաշտօնը ձեռք առնելով՝ ներկայ գտնուող զինուոր պաշտօնատարաց ըսաւ: «Այժմ պարտքը իմն է, զորս ի գործ պիտի դնեմ, բայց անոնց հետեւութիւնները Աստուծոյ կը վերաբերին: Պարոնայք, ձեր գործակցութեանը կը վստահանամ: քանզի կը զգամ թէ ձեր օգնականութեան հարկաւորութիւն պիտի ունենամ: Այս առթիւ հանգիստաւորութիւնը և վրաս ծանրացած պարտոց պատասխանատուութիւնը խորին տպաւորութիւն մի կը նշեն իմ վերայ»:

1 զօրութիւնները զանազան խորհրդածութիւն կը նշեն այս սոսկալի անցքերուն վերայ, և հասարակաց սաստիկ սրտմտութիւնը յայտնելով որ բնական է: միանգամայն երկիւղ մի կը յայտնեն, թէ չըլլայ որ 1 ինչօրն նախագահին աղէտալի վախճանը

նոր շփոթութեանց մէջ ձգէ Ամերիկայի Միացեալ Նահանգները:

Կերմանիոյ դաշնակցութեան մէջ երկպառակութիւնը երթալով կը ծանրանայ ի մասին Մէքսիկո-Հոլանդիայի դքսութեանց: Կերմանական վիճակաց մեծագոյն մասը որոշեցին որպէսզի յիշեալ դքսութիւնները առայժմ անկախ հրատարակուին ընդ կառավարութեամբ Ավստրիական զօրին: Իսկ փոքրագոյն մասը՝ որուն հետէ հարկաւ իրութեան՝ այս առաջարկութեան դէմն է: Իրութեան ահաբեկութիւնը՝ որ այսօրուան օրս շատ զօրաւոր է, ամենին հոյ չընելով վերջիշեալ որոշմանը վերայ, իւր գիտաւորութիւնը յառաջ տանելու վերայ է: այսինքն կաշխատի կատարելապէս տիրել Մէքսիկո-Հոլանդիայի դքսութեանց: Բանի արդէն իրութեան իրութեան կառավարութիւնը Պէրլինի երեսփոխանական ժողովոյն մէջ առաջարկեց զինուորական մեծ նաւահանքիստ մը շինելու ի Վիէն, որ Հոլանդիայի դքսութեան գլխաւոր քաղաքն է Պալլիի ծովուն վերայ: Այս առաջարկութեան հետ ընդարձակ բացատրութիւններ կան ի վերայ հարկաւորութեան իրութեան ազդեցութիւնը Պալլիի մէջ զօրացնելու: և այս բանին համար կառավարութիւնը կառավարիչնաւ փոխառութիւն մի ընել զբաժանոր բաղմամբ նաւեր շինելու և ծովային զինուորական հզօր զօրութիւն մի պատրաստելու: համար: Բնականապէս կը կարծուի որ Պէրլինի ազդային երեսփոխանական ժողովը՝ թէ և շատ բաներու մէջ համամիտ չէ կառավարութեան հետ, սակայն այս առաջարկութիւնը սիրով պիտի ընդունի, ըստորում ազդային զօրութիւնը մեծապէս պիտի աւելցնէ:

Վրաստանին նորէն, թէ մօտեցաւ Բրուսիոյ, Աւստրիոյ և Իրութեան վեհապետները ի խորհուրդ պիտի դաւանուին Վարշաւայի մէջ: Այս խորհրդակցութեան նպատակը պիտի ըլլայ ոչ միայն հարկաւոր զինուորութիւնները միաբանութեամբ ի գործ դնել Բոլոնիայի մէջ լազարութիւնը հաստատուն պահելու համար, այլև խորհուրդ պիտի ըլլայ:

ԲԱՆԱԿԵՒՆԻՑԻՆԵՐԻՆԻ

ԸՆԴԱՐՈՒ

Ընդհանրական ազգային ժողովոյն Հայոց գումարէրէն ի 12 փետրվարի 1865 ամի, ի կալկաթա:

Ըստ ազգարարութեան պարուն Զ. Մ. Մանուկի, եկեղեցականին կալկաթոյ և Զիշու սուրբ եկեղեցական Հայոց, ժողով հասարակութեան մերանէից գումարեցաւ ի ստորին Սրահ Կապարկոյ սուրբ եկեղեցւոյն միւրոյ յաւուր կիրակէի ի 12 փետրվարի այժմ ամսոյ յառաւորական տասնմիւրորդ ժաման յորում ժողովի ներկայ էին:

Պարոնայք:

- Գ. Գ. Գալստան
Խաչիկ Զ. տէր Ղուկաս
Զ. Մ. Գասպար (օրէնագէտ)
Աղէքսանդր Մ. Զ. Պալ
Յովհաննէս Կ. Սարգիս
Զ. Մ. Մանուկ
Սէթ Կ. Զ. Պետրոս
Զ. Ս. Բիշան
Ծատուր Ս. Բիշան
Յովհաննէս տէր Նիկողայոս
Յովհաննէս Ն. Յովհաննէս
Ղազար Գ. Գրիգոր
Գէորգ Պետրոս
Զ. Մ. Վարդան

- Գ. Գ. Միլիտոս
Զ. Գ. Արգար
Մ. Թ. Մանուկ
Մ. Ս. Մանուկ
Յովհաննէս Զ. Զ. Սարգիս
Մնացական Զ. տէր Ղուկաս
Գէորգ տէր Գրիգորեան
Գալստան Ոսկան
Գ. Զ. Սարգիս
Աւետիք Գալստան
Յարութիւն Զ. Աղալ
Լիւի Զ. Լիւի
Յովհաննէս Զ. Նիկողայոս
Յարութիւն Կարապետ (օրէնագէտ)
Միլիտի Խ. Յովհաննէս
Գէորգ Զ. Գ. Բաղրամ
Սիմէոն Զ. Գ. Բաղրամ
Ս. Ս. Ստեփաննոս
Պօղոս Զ. Աղալ
Միլիտի Մ. Ս. Յովհաննէս
Յովհաննէս Գ. Արգար
Պօղոս Կարապետ
Միլիտի Արգար
Վ. Պ. Զ. Վրդանէս
Յովհաննէս Գ. Բաղրամ
Զնիշու Խ. Ս. Մալիան
Յովհաննէս Ա. Միլիտի
Խաչիկ Գ. Սէթ
Միլիտի Մ. Զօրաբ

- Յարութիւն Մ. Զ. Նիկողայոս
Խաչիկ տէր Արգար
Բարսեղ Յարութիւն
Ղուկաս Խոջմալ
Յովհաննէս Կ. Սիմէոն
Կարապետ Մ. Յովհաննէս
Մանուկ Թորոս
Միլիտի տէր Յովհաննէս
Յարութիւն Մ. Գասպար
Յովհաննէս Մ. Գ. Ղուկաս
Աղէքսանդր Ն. Յովհաննէս
Կարապետ Զ. Սարգիս
Արգար Զ. Սարգիս
Կարապետ Մ. Զ. Նիկողայոս
Թովմաս Միլիտ
Մարտիրոս Զ. Սարգիս
Միլիտի Ս. Յովհաննէս
Ղազար Միլիտ
Մարգար Սարգիս
Յովհաննէս Զ. Սարգիս
Սէթ Զ. Սարգիս
Սարգիս Մարտիրոս Ս. Յովհաննէս
Զօրաբ Մ. Զօրաբ
Կարապետ Խ. Յովհաննէս
Միլիտի տէր Զ. Գալստան
Սիմէոն Արգար
Մարգար Կալիթ
Մնացական Միլիտի
Կարապետ Զ. Կ. Սարգիս



(Պիտի շարունակուի :)

